

ցած, որ անիկա դարձեալ կաթողիկ քարոզիչ մըն էր, Հայու տարազով եկած՝ իրենց թագաւորը շահելու և կրօնական նոր պայքար բանալու համար: Հետեւաբար՝ տեսակ մը հաւատաքննիչներ դարձած էին հանդէպ Յովհաննէս Թիւթիւնճիի, որ բոլորովին տարբեր՝ քաղաքական նպատակով գոցած էր հապէշ արքունիքը:

Հապէշ կղերր և հաւանօրէն նաև ժողովուրդը նոյնպէս շատ համակիր չէին կրնար եղած ըլլալ Յովհաննէս Թիւթիւնճիի քաղաքական առաքելութեան, որուն նմանները անցեալին ալ փորձուած և Հապէշիստանի համար օգտակար չէին եղած, վասնզի քրիստոնեայ աշխարհին խոստումները բնաւ չէին իրագործուած:

Հապէշները իրենց լեռներուն վրայ քիչ շատ ապահով էին և գիտակ, թէ ուղօր էին դիմադրելու իրենց շուրջի իսլամ երկիրներուն: Դիւրին չէր Նուպիոյ անապատներէն բանակ անցընել, Եգիպտոս արշաւել և Օսմ. կայսրութիւնը, որ մինչև իրենց սահմանները (Մասոփա) առաջացած էր, վանել՝ այս անապատին մէջ կոտելով: Այս պատճառաւ Յովհաննէս Թիւթիւնճիի առաջարկը հաւանական չէ, որ ընդունելութիւն գտած ըլլայ: Իր առաքելութիւնը հաճելի չէր ուրիշն հապէշ կղերին համար, որ կերպով մըն ալ իրաւունք ունէր կասկածելու, վասնզի Յովհաննէս Թիւթիւնճի որոշ հանգամանքով մը չէր, որ կը ներկայանար: Ո՛ր, ոեւէ թուղթ ունէր իր առաքելութիւնը ցոյց տուող և ոչ ալ պայծառ ու յստակ նպատակ մը, որ ծառայէր կասկածները ցրուելու:

Հապէշ կղերը բնաւ զինք պիտի չնեղէր, եթէ գիտնար այդ նպատակը, ինչպէս չէր նեղած իրմէ հազիւ երկու տասնեակ տարի առաջ, 1652ին, Հապէշ-